Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան

16.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Ա. Մելիքսեթյանի
Հ. Մանուկյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել է տարբերակ 6-ի նյութական իրավունքի բաժնի 13"9-րդ, 35"10-րդ, 2.17-րդ, 20"30-րդ, 27"37-րդ , 18"38-րդ, 21"43-րդ, 16"62-րդ, 12"74-րդ, 6"79-րդ հարցերը

9-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, խիստ թերի են, ինչը հնարավորություն չի տալիս ուղեցույցում նշված ճիշտ տարբերակից շեղվող տարբերակը ճիշտ համարելու համար: Հետևաբար գնահատականը չի բարձրացվում:*

10-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները կրկնում են ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտված դիրքորոշումները, մյուս կողմից խնդրի պայմանների ոչ հստակությունը թույլ չի տալիս գալ միանշանակ եզրահանգման, ուստի նշվածը մեկնաբանելով հօգուտ հավակնորդի , տրվում է 1 միավոր:*

17-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, քանզի խնդրում առկա են բավարար հանգամանքներ՝ եզրահանգման գալու համար, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

30-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները ընդունելի չեն, քանի որ, սույն դեպքում կիրառելի է ոչ թե ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության ինստիտուտը, այլ առկա է իդեալական համակցություն, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

37-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի մեկնաբանությունները ընդունելի չեն, քանզի հավակնորդի ընտրված պատասխանը սխալ է, իսկ նման խնդրի նախատեսման նպատակահարմարության հարցը դուրս է հանձնաժողովի գնահատման տիրույթից, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

38-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի մեկնաբանությունները ընդունելի չեն, քանզի հավակնորդի ընտրված պատասխանը սխալ է, իսկ նման խնդրի նախատեսման նպատակահարմարության հարցը դուրս է հանձնաժողովի գնահատման տիրույթից, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

43-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում խնդրի պայմաններից, մուտք գործելով եզրույթը երկակի մեկնաբանման հիմք չի կարող տալ : Այլ կերպ՝ հավակնորդի պնդումները չեն բխում խնդրի փաստական հանգամանքներից, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

62-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի փաստարկումը չի բխում տարածության մեջ քրեական օրենքի գործողության ռեալ սկզբունքից, այն է ՀՀ տարածքից դուրս ՀՀ քաղաքացու դեմ ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելու պարագայում օրենքի կիրառման պահանջներից, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

74-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները ընդունելի չեն, քանի որ, խնդրում առկա փվյալները հիմք չեն տալիս գալու նման եզրահանգման, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

79-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները ընդունելի չեն, քանի որ, խնդրում առկա փվյալները հիմք չեն տալիս գալու նման եզրահանգման, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ***5166*** ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակիորեն, նյութական իրավունքից ստացված 23 միավորը բարձրացնել 1 միավորով՝ արդյունքում արձանագրել 24 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ